Չեզ բացակա չենք դնի

Էդգար Ռևայի Դոլուխանյան

Ծնվել է 2000 թ. նոյեմբերի 14-ին Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում:

2006-2018թթ. հաճախում էր Խնուշինակի միջնակարգ դպրոցը: Էդգարը մանկուց աչքի էր ընկնում իր արտասովոր մտածողությամբ ու ընդունակություններով: Փայլուն տիրապետում էր պատմություն առարկային: Մասնակցել է բազմաթիվ օլիմպիադաների՝ ինչպես շրջանային, այնպես էլ՝ հանրապետական, գրավել պատվավոր տեղեր, արժանացել պատվոգրերի և դիպլոմների:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» բաժինը, այնուհետև, ուսումը կիսատ թողնելով, 2019 թ. մեկնում ծառայության:

Ծառայել էր Հադրութում՝ հակատանկային բրիգադում՝ որպես ավագ օպերատոր: Գերազանց ծառայության համար ավագ սերժանտի կոչում էր ստացել: Սպայական կազմը միշտ առանձնացնում էր նրան՝ հպարտության առիթ տալով ծնողներին: Տան միակ տղա զավակն էր, ուներ երկու քույր: Սեպտեմբերի 30-ին խոցել էր թշնամու տանկ: Զինընկերների վկայությամբ՝ մինչև վերջ կռվել է առանց վախի, հաղթողի ժպիտը դեմքին: Վերջին հեռախոսազանգը եղել է հոկտեմբերի 8-ին: Հոկտեմբերի 9-ին ընդհատվեց Էդգարի կյանքը՝ անկատար թողնելով նրա բազում երազանքներ: Էդգարը զոհվեց Կարախանբեյլիում:

Հայկ Արենի Գրիգորյան

Ծնվել է 2001թ. հունիսի 30-ին Ասկերանի շրջանի Այգեստան գյուղում:

2007-2019 թթ. հաճախել է տեղի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոց: Հմուտ աշակերտ էր, խելացի, բանիմաց, նպատակներով և երազանքներով լի: 2019թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժինը: Նույն թվականին էլ անցել է ծառայության Զրականում:

Ծառայության մեկ տարին և 3 ամիսն արդեն անցել էր, երբ սկսվեց դաժան պատերազմը: Երբևէ չի դժգոհել ծառայությունից: Հայկը մարտական գործողություններին մասնակցել է հենց առաջնագծում: Նա բնավորությամբ շատ համեստ էր, մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր, ուներ շատ ընկերներ, և բոլորը վստահ էին, որ ցանկացած հարցում Հայկը նրանց կհասնի և կաջակցի: Առանձնակի սիրով էր ֆիլմեր դիտում: Սպորտային մարզաձևերից սիրում էր խաղալ բասկետբոլ, շատ անգամներ է մասնակցել շրջանային և հանրապետական մրցումների, զբաղեցրել մրցանակային տեղեր:

Զոհվել է հոկտեմբերի 19-ին:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Ս.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 05(228)
հոկտեմբեր- դեկտեմբեր, 2020

ՉԵԶ ԲԱՑԱԿԱ ՉԵՆՔ ԴՆԻ, ԱՐՊՀ ԱՆՄԱՀԱՑԱԾ ՀԵՐՈՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

2020 թ. սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի առաջին իսկ պահից ԱրՊՀ տղա ուսանողները մեկնեցին առաջնագիծ: Ցավոք, նրանցից ոմանք հերոսացան՝ դառնալով հավերժի ճամփորդներ: ԱրՊՀ անմահացած հերոս ուսանողներ, Դուք միշտ մեզ հետ եք, Ձեր անունը՝ մեր սրտերում: Հավերժ փառք և պատիվ Ձեզ, մեր անմահ հերոսներ: Արցախի պետական համալսարանի ռեկտորը, պրոֆեսորադասախոսական կազմը, աշխատակիցները և ուսանողությունը խորը վշտով ցավակցում են Արցախյան պատերազմում նահատակված մեր հերոսների հարազատներին, մտերիմներին, ճանաչողներին: Նրանց հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում, ոչ ոք չի մոռացվի, ոչինչ չի մոռացվի:

ԳՆԱՑԻՆ - ՉԵԿԱՆ

Գնացին - չեկան տղաներն այն քաջ՝
Կապո՜ւյտ աչքերով, խաժակն, սևաչ:
Եվ նա, որ պիտի բժշկե՛ր մարդկանց,
Սպանվե՜ց հանկարծ:
Եվ նա, որ պիտի գրեր թանաքո՛վ,
Գրեց արյունո՛վ: Գրեց իր կյանքո՛վ:
Նա, ով հո՛ղ պիտի մշակեր էլի,
Հո՛ղ է երևի:
Նա, որ ուզում էր քարո՛վ կառուցել,
Մի քա՛ր է դարձել:
Նա, որ ուզում էր իր մո՛րը գրկել,
Մա՛յր հողն է գրկել:
Նա, որ պատմաբա՛ն կդառնար գիտուն,
Դարձավ... պատմությո՛ւն:
Գնացին - չեկան տղաներն այն քաջ՝
Կապույտ աչքերով, խաժակն, սևաչ:
Իսկ եթե չեկան, որտե՞ղ են նրանք -
Որտեղ լավ սի՛րտ կա՝ այնտեղ են նրանք...

Արամայիս Սահակյան

Չեզ բացակա չենք դնի

Արման Համլետի Աղաջանյան

Ծնվել է 2001 թ. ապրիլի 12-ին Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում:

2007թ. ընդունվել է Ճարտարի Հովիկ Հարությունյանի անվան N3 հիմնական դպրոցը: 9-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Ճարտարի ազատամարտիկների անվան N1 հոսքային դպրոցը և ավարտել 2019թ.:

Նույն թվականին ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Մաթեմատիկա» բաժինը:

2020 թ. հուլիսի 15-ին համալրեց հայոց բանակի շարքերը՝ մեկ տարի ծառայելով Մատաղիսում:

Սեպտեմբերի 27-ից մասնակցել է բոլոր մարտական գործողություններին, վարել «Ուրալ» մեքենա, զինամթերք տեղափոխել մարտական գործողությունների վայր, միաժամանակ, լինելով ԴՀՏ հրամանատար, փրկել է վիրավոր զինվորների կյանքեր:

Արմանը զոհվել է հոկտեմբերի 23-ին՝ հակառակորդի ավիահարվածից:

Շատ երազկոտ տղա էր, նա միշտ սիրում էր այնպիսի անակնկալներ անել մայրիկին, որ բոլորը մնում էին զարմացած, ընկերների շրջանակում քեֆ - ուրախություն կազմակերպողն էր: Ծնողներն ամեն հարցում աջակցում էին իրենց միակ զավակին, սակայն այդ հանգամանքը որևէ բացասական ազդեցություն չունեցավ նրա բնավորության վրա, էգոիզմի ոչ մի դրսևորում չէր նկատվում նրա մոտ:



Արեն Աշոտի Ասրյան

Ծնվել է 2000 թ. հունվարի 21-ին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում:

2006 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը, որը 2018 թ. ավարտել է գերազանց գնահատականներով:

2018 թ. ընդունվել է ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» բաժինը:

2018թ. նոյեմբերի 20-ից ծառայության է անցել ԱՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայությունում:

2020թ. մարտի 18-ին նշանակվել է ԱՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության ՊՊԾ գումարտակի թիվ 2 վաշտի թիվ 1 դասակի թիվ 3 ջոկի հրամանատար:

Ուներ ոստիկանության սերժանտի կոչում:

Արենը հայրենասեր, չափազանց ընկերասեր, բարի, հոգատար և ընտանիքին նվիրված զավակ էր: Մեծ նպատակներ ուներ, երազում էր դառնալ քննիչ և փայլել իր ընտրած մասնագիտության մեջ:

Զոհվել է 2020թ.հոկտեմբերի 16-ին:

Չեզ բացակա չենք դնի

Արտակ Յուրայի Միրզոյան

Ծնվել է 2001 թ. օգոստոսի 16-ին Ասկերանի շրջանի Իվանյան գյուղում:

Ընտանիքի կրտսեր զավակն էր, իրենից մեծ քույր ու եղբայր ուներ: 2007թ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը: Դեռ մանկուց շատ էր սիրում զինվորական համազգեստն ու միշտ ասում էր, թե երբ է մեծանալու, որպեսզի բանակ գնա, զինվոր դառնա: Սովորելու տարիներին ամենից շատ սիրում էր ռազմագիտություն և ֆիզկուլտուրա առարկաները, ինչն էլ խթանեց մասնագիտության ընտրության հարցում:

2019 թ. ընդունվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը:

2020թ. հունվարի 8-ին, կիսատ թողնելով ուսումը, զորակոչվեց բանակ: Ծառայում էր Մարտակերտի շրջանի Կիչան(Սերխավանդ) գյուղում: Ի կատար ածվեց Արտակի վաղեմի երազանքը՝ նա դարձավ զինվոր, ով կարճ ժամանակահատվածում հասցրեց գրավել հրամանատարների և ընկերների սերն ու հարգանքը:

Սեպտեմբերի 27-ին նրանց տեղափոխեցին ԱՀ ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկը: Արտակն իր զինակից ընկերների հետ միասին իրականացնում է հետախույզի բարդ ու պատասխանատու աշխատանքը:

Հոկտեմբերի 10-ին Արտակը հերոսացավ: Հայրենիքի զինվորը երկրային կյանքում իր տեղը գտավ եղբայրական գերեզմանատանը՝ իր հերոս ընկերների կողքին:

Վարդան Պավելի Դանիելյան

Ծնվել է 2000թ. հոկտեմբերի 31-ին Մարտակերտ քաղաքում:

2006-2018 թթ. հաճախել է դպրոց, եղել է օրինակելի, սիրված ու հարգված աշակերտ: Բնավորությամբ աշխույժ տղա էր, անչափ բարի և հոգատար: Չորս տարեկանից հաճախում էր ըմբշամարտի: Սպորտը նրա կյանքի մի մասն էր: Բազում հաջողությունների և հաղթանակների է հասել, տարբեր երկրներում և հարթակներում արժանացել բազմաթիվ մեդալների և խրախուսանքների:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԱրՊՀ ՆԶՊ բաժինը՝ ցուցաբերելով բարձր գնահատականներ: Ուսումը կիսատ է թողնում և հունվարի 21-ին մեկնում ծառայության: Ծառայում էր Մարտունու 2-րդ պաշտպանական զորամասում:

Վարդանը մեծ նպատակներ ուներ: Նա երազում էր դառնալ ըմբշամարտի մարզիչ կամ բանակում անցնել ծառայության՝ որպես ֆիզղեկ: Վերջին անգամ հարազատների հետ կապվել է հոկտեմբերի 24-ին: Վարդանի ճակատագիրն ավելի քան երկուս ու կես ամիս անհայտության մեջ էր: Պատերազմից հետո հարազատները երկար փնտրել են նրան և միայն հունվարի 7-ին իմացել, որ Վարդանը անմահացել է:

Չեզ բացակա չենք դնի

Միքայել Կամոյի Ստեփանյան

Ծնվել է 2002 թ. հունվարի 21-ին Ռուսաստանի դաշնության Տիխորեսկ քաղաքում:

2003թ. ընտանիքը տեղափոխվել է Ստեփանակերտ: Հինգ տարեկան չկար, երբ իր պահանջով սկսեց հաճախել դպրոց:

2006-2016թթ. սովորել է Ա.Գրիբոյեդովի անվան N3 դպրոցում, 2016-2019թթ.՝ Վ. Ջահանգիրյանի անվան N11 ավագ դպրոցում: 2019թ. ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» բաժինը: 2020թ. հուլիսի 6-ին գնաց հայրենիքի համար սրբազան պարտքը կատարելու: Ծառայում էր Ջրականում:

Երբ սկսվեց պատերազմը, Միքայելը զանգեց հարազատներին և նրանց հորդորեց, որ նկուղներ գնան, հետո ասաց, որ իրենց շատ ապահով տեղ են պահում, այն ինչ պարզվում է, որ շատ անգամներ եղել են շրջափակման մեջ և մեծ դժվարություններով դուրս եկել: Երբ նրանց խմբին հարցրեցին, թե ով է ուզում կամավոր գնալ և պաշտպանել Կարմիր Շուկա գյուղը, նա առաջիններից էր: Հոկտեմբերի 28-ին վերջին անգամ զանգեց հարազատներին, ասաց, որ բոլորին շատ է կարոտել, քրոջն էլ ասաց, որ երբ տղա ունենա, Միշա դնի նրա անունը: 50 օր անց Միաքելին գտան ԴՆԹ-ի միջոցով: Նա իր 19 զինակից ընկերների հետ զոհվել էր հոկտեմբերի 29-ին Քերթ գյուղում:

Միքայելը երբևէ չէր դժգոհել ծառայությունից, նույնիսկ պատերազմի ժամանակ ուրախ էր խոսում, ասում էր, որ իր հաշվարկներով քիչ է մնացել, կավարտվի, և նա կգա տուն:

Վազգեն Վագիֆի Աբրահամյան

Ծնվել է 1998թ. ապրիլի 26-ին Մարտունու շրջանի Եմիշճյան գյուղում:

2004թ. հաճախել է գյուղի ութամյա դպրոցը, որից հետո ավարտել Սպիտակաշենի միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին սովորում էր լավ, ակտիվ և եռանդով լեցուն տղա էր, չէր սիրում սուտը, բարի էր և ընկերասեր, ուներ բազում նպատակներ՝ ապագայի հետ կապված:

2016 թ. ավարտել է դպրոցը և ընդունվել ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը:

Նույն թվականին էլ անցել է ծառայության՝ հայրենիքի համար պարտքը կատարելու: Երկու տարի ծառայել է Մատաղիսում և երբևէ չի դժգոհել հարազատներին: Բնավորությամբ շատ հանգիստ և հավասարակշռված տղա էր:

Ծառայությունն ավարտելուց հետո եղբոր հետ պլանավորել էր սեփական գործ ունենալ, որին զուգահեռ նաև դասերին էր հաճախում:

2020թ. պատերազմին մասնակցել է որպես կամավոր: Մարտական գործողություններին մասնակցում էր Մարտունու 3-րդ պաշտպանականում: Վիրավորվել է հոկտեմբերի 30-ին: Զոհվել է նոյեմբերի 5-ին, ծանր այրվածքների պատճառով:

Չեզ բացակա չենք դնի

Միքայել Մանվելի Առուստամյան

Ծնվել է 2001թ. հուլիսի 5-ին Ասկերանի շրջանի Մխիթարաշեն գյուղում:

2007-2011թթ. սովորել է գյուղի տարրական դպրոցում:

2011-2018թթ. սովորել է Շոշի Ս.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցում:

2015-2018 թթ. հաճախել է Ստեփանակերտի ԹՈՒՄՈ ստեղծարար կենտրոն:

2018թ. ընդունվել է ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժինը:

2019թ. զորակոչվել է ԱՀ պաշտպանության բանակ: Հերոսաբար զոհվել է 2020թ. հոկտեմբերի 10-ին, Վարանդայի (Ֆիզուլի) շրջանի Կարախանբեյլի գյուղում:

Միքայելը խելացի և բանիմաց աշակերտ էր: Հարազատներն ու ընկերները նրան հիշում են իր տարբերվող ժպիտով և անսահման բարությամբ: Նա բնավորությամբ շատ հանգիստ և հավասարակշռված տղա էր: Գյուղում ինքնուրույն խաղ է ստեղծել, որից հետո էլ նրան տեսել և հրավիրել են ԹՈՒՄՈ ստեղծարար կենտրոն՝ գիտելիքները ավելի խորացնելու համար: Միքայելը նվիրված և հավատարիմ ընկեր էր, շրջապատում բոլորը յուրահատուկ սիրով էին կապված նրա հետ:

Աշոտ Մեյվայի Ավանեսյան

Ծնվել է 2000 թ. նոյեմբերի 7-ին Հադրութի շրջանի Ազոխ գյուղում:

Ինը տարի սովորել է գյուղի դպրոցում, որից հետո ընդունվել է Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական ուսումնարան: Մանկուց սիրել է զինվորական ծառայությունը: Ուզում էր շարունակել և ավելի խորացնել իր գիտելիքներն այդ բնագավառում: Որոշել էր ուսումը շարունակել Երևանի Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում:

Աշոտը շատ էր սիրում գյուղը: Փոքր հասակում շատ ամաչկոտ էր, բայց միևնույն ժամանակ՝ շատ ճարպիկ: Միշտ ասում էր, որ մեծանա, իրեն ասելու են՝ «Սպեցնազի Աշոտ» և իսկույն ճանաչեն: Քրոջ բնութագրմամբ նա շատ ընկերասեր էր և սիրում էր կատակներ անել, բոլորին ուրախացնել: Հրամանատարի խոսքով՝ նա անվախ ու քաջ զինվոր էր, լավ դիրք էր պահում:

2018թ. ընդունվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը:

2019թ. հունվարի 8-ին զորակոչվել է պաշտպանության բանակ և ծառայության անցել Ջրականում (Ջաբրայիլ):

Ապրիլյան պատերազմի ժամանակ Աշոտը 16 տարեկան էր, բայց մի քանի ընկերներով կամավորագրվել էին: Այս պատերազմում նա անմահացել է առաջին օրը՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին:

Չեզ բացակա չենք դնի

Արսեն Վրեժի Գրիգորյան

Ծնվել է 2001 թ. հունվարի 13-ին Մարտակերտ քաղաքում:

Մեծացել և դաստիարակվել է զինվորականի ընտանիքում: 2007 թ. ընդունվել է Մարտակերտի Վ. Բալայանի անվան N1 դպրոցը:

Նա շատ պարտաճանաչ տղա էր, մասնակցում էր տարբեր մրցումների, սպորտով էր զբաղվում՝ բռնցքամարտով: Ծառայության ընթացքում շատ լավ էր պատրաստվում զինվորական քննություններին և միշտ գերազանց արդյունքներ էր ցուցաբերում:

Դպրոցն ավարտել է 2019թ. և ընդունվել ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՆԶՊ բաժինը: 2019 թվականի հուլիսի 8-ին ծառայության է անցել զինված ուժերի շարքերում:

Արսենը ծառայում էր Մարտակերտի զորամասերերից մեկում: Ծառայության մեկ տարին և երկու ամիսն արդեն անցել էր:

Բնավորությամբ շատ հանգիստ անձնավորություն էր, շատ հայրենասեր, ընկերասեր, սրտաբաց,

նպատակասլաց, մարդկային բոլոր հատկանիշներով օժտված մի տղա, ով երազում էր զինվորական դառնալ և հոր գործը շարունակել:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմում Արսենը իրենց դասակի զինակիցների հետ արիաբար կռվում էր առաջնագծում: Հակառակորդի ԱԹՍ-ն հայտնաբերում է նրանց դիրքը և հարվածում հենց այդ դիրքին: Արսենը անմահացավ պատերազմի հենց առաջին օրը:

Աբրահամ Ալեքսանդրի Բալայան

Ծնվել է 1997 թ. հոկտեմբերի 16-ին քաղաք Ստեփանակերտում:

2004-2014 թթ. սովորել է Ստեփանակերտի N8 դպրոցում:

2014թ. ընդունվել է ԱրՊՀ մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը:

2016-2018 թթ. ծառայել է զինված ուժերի շարքերում:

Դպրոցական և ուսանողական տարիներին Աբրահամը աչքի էր ընկել իր չափազանց բարի տեսակով: Ընկերներն ու հարազատները նրան հիշում են աշխույժ, կատակասեր, կարեկցող և նվիրվող մարդկային տեսակով: Համալսարանական տարիներին Աբրահամը շատ ակտիվ է եղել, համարյա բոլոր միջոցառումներին նա ներկա է եղել և իր ներկայությամբ բոլորին ուրախացրել: Նրա կողքին անհնար էր տխուր լինել:

Մարտական գործողությունների ժամանակ Աբրահամը մասնակցել է ամենաթեժ մարտերին: Եղել է Վարանդայում (Ֆիզուլիում), Կարախանբեյլիում:

Զոհվել է 2020թ. հոկտեմբերի 11-ին:

Չեզ բացակա չենք դնի

Սամվել Լևոնի Մնացականյան

Ծնվել է 2001թ. սեպտեմբերի 10-ին Հադրութ քաղաքի ամենակոլորիտային և ամենահին թաղամասում:

2007 - 2019թթ. հաճախել է Հադրութի Միքայել Մանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոց:

Նա մանկուց շատ էր կապված իր հին թաղամասի հին տան հետ և որոշել էր ծառայությունն ավարտելուց հետո տունն ամբողջությամբ վերակառուցել: Սամվելը ուժեղ ու մարզված տղա էր, պատանեկության ժամանակ ըմբշամարտով էր զբաղվում և բազում մրցանակների էր արժանացել:

2019թ. ընդունվեց ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը: 2020թ. հունվարի 8-ին զորակոչվել է բանակ: Եղել է ավագ ռադիոհեռախոսավար:

Ուներ հանգիստ, հավասարակշռված բնավորություն և գիտեր իր խոսքի արժեքը: Պատերազմի ժա-

մանակ էլ կրկին ամենավտանգավոր տեղերում ինքն էր, օգնելու բան լիներ՝ առաջինը ինքն էր: Ռադիոհեռախոսը (ռացիան) տալիս էր իր մտերիմ ընկերոջը, վերջինս կարճատես էր, չթողնելով, որ նա առաջ գնա, ինքն էր բարձրանում դիտակետեր և ընկերոջ փոխարեն տեղեկություն հաղորդում: Նույնիսկ այնպես էր ստացվել, որ մենակ երեք թուրքի հետ էր կռվել ու ոչնչացրել նրանց: Հետագայում միայն պարզվեց, որ այդ ամբողջ ընթացքում նա հարազատներին խաբել էր՝ իր գտնվելու վայրի մասին սխալ տեղեկություններ տալով, բազում դժվարությունների մասին խոսելու, կիսվելու փոխարեն ասելով՝ ամեն բան շատ լավ է: Սամվելը զոհվել է 2020 թվականի հոկտեմբերի 30-ին:

Մասիս Թալիշի Մարտիրոսյան

Ծնվել է 1997 թ. օգոստոսի 26-ին Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղում:

2003-2015 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Աշխարհագրություն» բաժինը:

2016 թ. հունվարին զորակոչվել է հայոց բանակ և ծառայության անցել Մարտունու N զորամասում: Իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ապրիլյան քառօրյա պատերազմում: 2018 թ. ավարտել է ծառայությունը և շարունակել ուսումը: Սովորելուն զուգահեռ աշխատել է «Բեյզ մեթըլս» ընկերությանը պատկանող Կաշենի լեռնահանքային համալիրում: Պատերազմի առաջին օրվանից առաջնագծում էր: Զոհվելուց ընդամենը ժամեր առաջ հասցրել էր զինվորների կյանքեր փրկել: Նոյեմբերի 1-ին՝ հերթափոխի ժամանակ, անօդաչու թռչող սարքը Կարմիր շուկա գյուղի մատույցներում ֆիքսել էր մեքենան և հարվածել: Մասիսի հետ զոհվել են իր երկու ընկերները:

Մասիսն աշխույժ, բարի, ընկերասեր, կատակասեր, մարդամոտ տղա էր, ամեն մի դժվար իրավիճակից ելք գտնում էր: Զենքի հանդեպ մեծ սեր ուներ: Փոքր տարիքից զբաղվում էր որսորդությամբ: Շատ էր սիրում փոքր երեխաներին: Նշանված էր, որոշել էր պատերազմի ավարտից հետո ամուսնանալ և որդի ունենալ՝ անվանակոչելով նրան Մոնթե:

Չեզ բացակա չենք դնի

Զաքար Արամի Սարգսյան

Ծնվել է 1996թ. հունվարի 16-ին Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում:

Ընտանիքը տեղափոխվել է Հադրութի շրջան՝ գյուղ Մարիամաձոր: Երեք տարեկանում մահանում է մայրը, մի քանի տարի հետո՝ հայրը: Նրան մեծացնում են մայրական տատիկն ու պապիկը:

2002 թ. հաճախում է Մարիամաձորի Ն. Սայիյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում է լավ, աչքի է ընկնում թե՛ իր գիտելիքներով, թե՛ իր ակտիվությամբ: Մասնակցում է օլիմպիադաների՝ շրջանային և հանրապետական փուլերում գրավելով առաջին տեղ ՆԶՊ առարկայից:

Դեռ դպրոցական տարիներից ուներ իր շրջապատը, որտեղ շատ սիրված ու հարգված էր: Զաքարը ընկերասեր, հոգատար, ճշտապահ ու ճշտախոս, ջանասեր, խելացի ու տաղանդավոր տղա էր:

2013 թ. ավարտում է դպրոցը և ընդունվում ԱրՊՀ՝ «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» բաժինը: 2015 - 2017 թթ. ծառայել է ԶՈՒ շարքերում: Ուներ ավագ սերժանտի կոչում:

2018 թ. ծառայության է անցել ԱՀ ոստիկանությունում: 2019թ. ավարտում է ուսումը, ստանում բակալավրի աստիճան, ընդունվում մագիստրատուրա, որը սովորում էր գերազանց: 2019թ. աշխատանքի է անցնում Հադրութի շրջանի Տողի Վիգեն Գրիգորյանի անվան միջն. դպրոցում՝ որպես զինղեկ: Պատերազմի հենց առաջին օրերին ընկերների հետ մեկնել է առաջնագիծ: Մարտական գործողություններին մասնակցել է Վարանդայում, Կարախանբեյլիում: Տեղեկանալով, որ հայրենի գյուղը ևս վտանգված է, վերադարձել է Մարիամաձոր և հոկտեմբերի 20-ին զոհվել այնտեղ:

Վիգեն Ռոբերտի Օհանյան

Ծնվել է 2000թ. ապրիլի 18-ին Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում:

Վեց տարեկանից դպրոց է հաճախել Ճարտարում: Վիգենը դպրոցում աչքի ընկնող, բոլորի կողմից սիրված աշակերտ էր, խելացի ու սուր մտքի տեր: Բազում նախասիրություններ ուներ, շատ էր սիրում սպորտով զբաղվել՝ «բոքս» մարզաձևով:

2017թ. ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» բաժինը: Վիգենը շատ խիզախ ու հայրենասեր էր: Պարտադիր ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո որոշել էր շարունակել ծառայությունը Մարտունու երկրորդ պաշտպանականում: Վիգենը հրետանավոր էր և պատերազմի առաջին օրվանից ասում էր, որ ամեն ինչ լավ է, այնինչ հարազատներն անգամ տեղյակ չէին, որ իրեն տեղափոխել են 9-րդ պաշտպանական, որտեղ էլ հոկտեմբերի 9-ին Վիգենն ու իր զինակից ընկերները զոհվեցին:

Խարիզմատիկ բնավորություն ուներ, լավագույնին ձգտող, բարձրաձաշակ: Ընտանիքում փոքրն էր: Բոլորն ուզում էին, որ նա ընտրեր բժշկի մասնագիտություն, բայց նրան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն էր հետաքրքրում:

Չեզ բացակա չենք դնի

Իլյա Խաչատուրի Հակոբյան

Ծնվել է 2002թ. հունվարի 12-ին Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում:

2008 - 2017թթ. սովորել է Մաղավուզի Մհեր Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում:

2017-2018 թթ. Իլյան սովորել է Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում: Մեկ ամսվա մեջ ֆիզիկական բարձր պատրաստվածության շնորհիվ ճանաչվել է «Լավագույն զինվոր-մարզիկ»:

2019-2020թթ. տեղափոխվել է գյուղ և ավարտել տեղի դպրոցը: Դպրոցում և վարժարանում մասնակցել է ստեղծագործական, մարզական մրցաշարերին, «Հայ ասպետ» հեռուստանախագծին՝ գրավելով առաջնակարգ տեղեր և արժանանալով խրախուսանքների ու մեդալների: Իլյան շատ էր սիրում սպորտը և առանձնահատուկ սեր ուներ վոլեյբոլի նկատմամբ:

2020թ. նա ընդունվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը: Բարի, կամեցող, լավատես, համառ, հաստատակամ, խելացի ու նպատակասլաց. ճանաչողներն այսպես են բնութագրում մերօրյա հերոսին: Անշահախնդիր ու բոլորին օգնող տղա էր Իլյան:

2020թ. օգոստոսի 11-ին Իլյան ծառայության է անցնում Հադրութի N զորամասում: Պատերազմի առաջին օրերին վաշտի կեսը զոհվել է, վիրավոր ու զոհված ընկերներին ինքն ու իր ընկերներն են հանել մարտադաշտից: Չնայած Հադրութում էր ծառայում, բայց մասնակցել էր նաև Մարտունու և Շուշիի մարտերին:

Վիրավորվել է նոյեմբերի 7-ին: Անմահացել է Շուշիում՝ նռնակը գրպանում բացած: Իլյան երազում էր ծառայությունն ավարտելուց հետո վերանորոգել տունը, իսկ համալսարանն ավարտելուց հետո՝ գյուղի դպրոցում վոլեյբոլի դպրոց հիմնել և մարզել երեխաներին:

Արամ Կառլոսի Գրիգորյան

Ծնվել է 2001 թ. մարտի 7-ին քաղաք Ստեփանակերտում:

2006 թվականից սովորել է Ա. Գրիբոյեդովի անվան N3 դպրոցում: 10-րդ դասարանը սովորել է ֆիզմաթ դպրոցում, 11-12-րդ դասարանները՝ 8-րդ դպրոցում:

Դպրոցական տարիներին շատ ակտիվ աշակերտ է եղել, ընդունակ էր և շատ ընկերասեր: Միշտ մասնակցում էր ամենատարբեր միջոցառումների:

2017 թ. ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի SS բաժինը: 3-րդ կուրսի ուսանող էր, նպատակ ուներ բակալավրիատն ավարտելուց հետո այլ մասնագիտությամբ շարունակել, ուզում էր հոր հետ շինարարության ասպարեզում բիզնեսներ ունենալ, մեծ հաջողությունների հասնել: Որոշել էր շուտ ամուսնանալ և շատ երեխաներ ունենալ:

Զոհվել է հոկտեմբերի 4-ին, Արցախ Էներգոյի հրետակոծության հետևանքով՝ հերթապահության ժամանակ:

Չեզ բացակա չենք դնի

Ալեքսեյ Արամայիսի Հովհաննիսյան

Ծնվել էր 2001թ. մայիսի 2-ին Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում:

2007-2019 թթ. սովորել է Քարին տակի միջնակարգ դպրոցում: Մինչև 9-րդ դասարանը սովորել է գերազանց և ստացել գերազանցության վկայական: Ուներ նաև երաժշտական կրթություն: Նվագում էր կլառնետ:

2019 թ. ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի SS բաժինը և զորակոչվել բանակ: 5 ամիս սովորել է Լուսակերտում և ստացել հրետանավորի վկայական ու մեդալ, կրտսեր սերժանտի կոչում ու մեդալ՝ որպես լավագույն զինվոր:

Նրա զենքը եղել է ականանետը: Ծառայել է Զրականում՝ 2-րդ գումարտակի 1-ին մարտկոցում: Ամռանը լավ ծառայության համար ստացել էր սերժանտի կոչում և խիզախության մեդալ:

Պատերազմի ժամանակ եղել է ականանետի հաշվարկի հրամանատար, ինքն էր ղեկավարում ու կրակ արձակում: Նրա ղեկավարած հաշվարկը ՊԲ ԶՈՒ-ում ճանաչվել էր լավագույնը: Հոկտեմբերի սկզբներին Զրականից տեղափոխվեց Հադրութ, այնուհետև Վարանդա ու կամավոր ընկերների հետ մեկնեց առաջնագիծ: Ալեքսեյին նշանակեցին դիր-

քի ավագ: Մինչև հոկտեմբերի 28-ը կռվում էին առաջնագծում: Զոհվել է հոկտեմբերի 30-ին, Մարտունու Քերթ գյուղում:

Ալեքսեյը եղել է խելացի, բարեսիրտ, համեստ, ամաչկոտ ու հետաքրքրասեր: Դպրոցում նա մեծ հեղինակություն ուներ, մասնակցում էր ամենատարբեր միջոցառումների, օլիմպիադաների, դպրոցական սպարտակիադաների, զբաղվում էր կարատեով, ուներ 3 գոտի, մի շարք մեդալներ՝ սկսած 3-րդ տեղից մինչև առաջին, պատվոգրեր և գովասանագրեր:

Սիրում էր ստեղծագործել, գրում էր բանաստեղծություններ, հորինում երգեր, շատ էր սիրում երաժշտություն լսել:

Միխայիլ Արայիկի Խաչատրյան

Ծնվել է 2002 թ. մայիսի 18-ին Ստեփանակերտում:

2008 թ. ընդունվել է Ստեփանակերտի N 8 դպրոցը և ավարտել 2020 թվականին:

Հաջող հանձնելով ընդունելության քննությունները՝ ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բաժինը: Դեռ 12-րդ դասարանից անցնում էր ծրագրավորման կուրսեր՝ Ինսթիգեյթ մոբայլում:

2020 թ. հուլիսի 20-ին զորակոչվում է բանակ և ծառայության անցնում Զրականում՝ որպես հրետանային մարտկոցի հրամանատար-հաշվարկող:

Պատերազմի 8-րդ օրը՝ հոկտեմբերի 4-ին, Միխայիլը հայրենիքի պաշտպանության սուրբ գործում հերոսաբար զոհվեց:

Կենսախինդ, խելացի ու հայրենասեր տղա էր Միխայիլը: Լեզու էր գտնում ցանկացած բնավորության տեր մարդկանց հետ, որի շնորհիվ ուներ մեծ ընկերական շրջապատ: Հետաքրքրված էր ֆուտբոլով, նույնիսկ ինստագրամյան ֆուտբոլային էջ ուներ և շատ հետևորդներ: Ուներ նաև հեղինակային ֆիլմ, որն այդպես էլ չհրապարակվեց:

Չեզ բացակա չենք դնի

Էրիկ Վիլենի Հովսեփյան

Ծնվել է 2001թ. հուլիսի 19-ին քաղաք Ստեփանակերտում:

2007-2019 թթ. սովորել է Ստեփանակերտի Վ. Զահանգիրյանի անվան N11 դպրոցում: Սովորելու տարիներին աչքի էր ընկնում կազմակերպչական ձիրքով, ընկերների և առհասարակ շրջապատի նկատմամբ բարյացակամ, հոգատար վերաբերմունքով: Վեց տարեկան հասակից սկսել էր զբաղվել բասկետբոլ մարզաձևով: Տասնյակ անգամներ բասկետբոլի թիմային առաջնություններում թիմն իր պրոֆեսիոնալ խաղի շնորհիվ 1-ին տեղն էր գրավել և արժանացել շնորհակալագրերի, խրախուսագրերի և հավաստագրերի:

2019 թ. Էրիկն ընդունվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը: Ուսումը կիսատ թողնելով՝ 2019 թվականի հունվարի 8-ին զորակոչվել էր բանակ: Էրիկին դեռ մանկուց առանձնակի հոգատարությամբ ու յուրահատուկ սիրով էին վերաբերում հարազատներն ու բարեկամները: Բնավորությամբ անհանգիստ էր, միշտ շարժի մեջ:

2020թ. հոկտեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, հրամանատարի հետ Մարտակերտի ուղղությամբ մարտական առաջադրանք կատարելու մեկնելիս թշնամին թիրախավորել և հրթիռահրետակոծել էր Մարտակերտի պաշտպանական շրջաններից մեկի հրետանու պետ, Էրիկ Հովսեփյանի հրամանատար Դլեյան Արմանի ՄԱ3 մակնիշի ծառայողական ավտոմեքենան: Մեքենայի մեջ զոհվում են Էրիկ Հովսեփյանը և հրամանատար Արման Դլեյանը...

Արեն Սամվելի Սարգսյան

Ծնվել է 2001 թ. դեկտեմբերի 31-ին Մարտունու շրջանի Հերհեր գյուղում:

2008-2020 թթ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին շատ ակտիվ աշակերտ է եղել: Մասնակցել է մի շարք սպորտային միջոցառումների և օլիմպիադաների, ուներ բազում մեդալներ և դիպլոմներ: «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթում մի քանի անգամ զբաղեցրել է առաջնային տեղեր:

Ուսումն ավարտելուց հետո ընդունվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ» բաժինը, ապա զինվորական պարտքը կատարելու համար անցել ծառայության՝ զինված ուժերի շարքերում: Ծառայել է Մարտունու 3-րդ պաշտպանականում:

Ընդամենը մի քանի ամսվա զինծառայող էր, երբ սկսվեց պաերազմը: Մարտական գործողություններին մասնակցել է Մարտունի-Վարանդա հատվածներում, եղել քաջարի զինվոր: Զոհվել է հոկտեմբերի 26-ին:

Բնավորությամբ շատ հանգիստ երիտասարդ էր Արենը, հավասարակշռված, զուսպ: Նա շատ նվիրված էր իր շրջապատին, ընկերներին, հարազատներին, ընտանիքին, աշխատասեր էր և նպատակասլաց: